ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 645-Ա/2 30.05.2019

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1013.03.4 «ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 1013.03.01.4 «ԽՈՀԱՐԱՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿԱԿԻ (ԴՈՒԱԼ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. մարտի 22-ի N 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանը և ՀՀ ԿԳ նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված փորձագիտական դրական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1013.03.4 «Խոհարարական գործ» մասնագիտության 1013.03.01.4 «Խոհարար» որակավորմամբ փորձարարական երկակի (դուալ) ուսուցման համակարգի ուսումնական պլանը և մոդուլային ուսուցման ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2018/2019 ուսումնական տարվանից փորձարարական երկակի (դուալ) ուսուցման համակարգի ներդրման մասին» թիվ 1401-Ա/2 հրամանի հավելված 1-ով հաստատված «Երևանի թիվ 6 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Սոնա Գրիգորյանին՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1013.03.4 «Խոհարարական գործ» մասնագիտության 1013.03.01.4 «Խոհարար» որակավորման երկակի (դուալ) ուսուցումը կազմակերպել սույն հրամանի հավելվածով հաստատված ուսումնական պլանին և մոդուլային ծրագրերին համապատասխան:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378